**Արձանագրություն N 2**

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/2-Լ) ծածկագրով գնանշման հարցման

գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան | 11 մարտի 2019 թ.

ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Տ. Պետրոսյանը

անդամներ՝ Ս. Սարգսյանը, Մ. Դուրգարյանը, Հ. Վանյանը, Մ. Կարապետյանը

քարտուղար՝ Լ. Հարությունյանը

## I. Հայտերի բացման մասին

-------------------------------------------------------------------------------

(Տ. Պետրոսյան)

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

| Չափաբաժնի համարը | Գնվելիք աշխատանքի | | Հայտ ներկայացրած մասնակիցների | | |
|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Ծառայության առավելագույն գինը | Անվանումը | Գնային առաջարկը (առանց ԱԱՀ) | Գնային առաջարկը (ԱԱՀ-ն ներառյալ) |
| 1. | Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ քաղաքային կամ գյուղական վայրերում | 739 300 | «Էկոդեզ ՍՊԸ»* | 3 600 000 | 3 600 000 |
| | | | «ԵրՄիք» ՍՊԸ* | 442 568 | 442 568 |
| | | | ԱՁ Վահրամ Գրիգորյան* | 8 400 000 | 8 400 000 |
| | | | ԱՁ Գևորգ Ստեփանյան* | 8 500 000 | 8 500 000 |

***մասնակիցը ԱԱՀ վճարող չէ***

11.03.2019թ.-ի ժ 11:00-ին հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանը ներկայացրեց բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատեց իրեն ներկայացված հայտերի ցուցակը:

Հայտերի վերաբերյալ պարզաբանումներ չեն ստացվել:

**II. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին**

---

(Տ. Պետրոսյան)

1. Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/2-Լ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «ԵրՄիք» ՍՊԸ-ին:

բ) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալները՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով:

գ) Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ. Խորենացու-3, 7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ ________________ Տ. Պետրոսյան

անդամներ՝ ________________ Ս. Սարգսյան

________________ Մ. Դուրգարյան

________________ Հ. Վանյան

________________ Մ. Կարապետյան

քարտուղար՝ ________________ Լ. Հարությունյան